



ԹՄՆԵՐՄԷ ԹՄԾՁՐՆՈՒԹՅԱՆ ԿՐԹՄԷՍ ԿՐԹՄԷՍ ԿՐԹՄԷՍ ԿՐԹՄԷՍ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

N \_\_\_\_\_

«\_\_» \_\_\_\_\_ 2017 թ.

**Հետք պարբերականի լրագրող  
Մեղա Ղուկասյանին**

**Հարգելի Մեղա Ղուկասյան**

Հայտնում եմ, որ Ազգային ժողովի առաջին և երկրորդ նստաշրջանների ընթացքում բոլոր այն քաղաքացիների համար, ովքեր հանդիպման ցանկություն են հայտնել, կազմակերպվել է ընդունելություն: Ավելի քան տասը քաղաքացիների այցի նպատակն ու առաջարկները նրանց կողմից ձևակերպվել են բանավոր, բացառությամբ՝ մեկի, ում գրավոր խնդրանքը վերաբերում էր իր՝ աշխատանքից ազատվելու հանգամանքներին և վերականգնման հնարավորություններին: Հաշվի առնելով քաղաքացու խնդրանքը՝ նրա անձնական տվյալներն ու դիմումի բովանդակության մանրամասները հրապարակել չեմ կարող, քանի որ հարցի ուսումնասիրությունը, վերլուծությունն ու հնարավոր լուծումը ընթացքի մեջ են: Մնացած դիմողներից եղել են քաղաքացիներ, որոնց հարցերի պատասխանները տրվել են այցի ընթացքում, մյուսների առաջադրած խնդիրների վերլուծությունը պահանջել է որոշակի ժամանակահատված, որից հետո տրվել են լուծումներ, պատասխաններ, կամ բարձրաձայնվել են Ազգային ժողովի նիստերի ընթացքում ընդհանուր հարցերի կամ ելույթների ձևով: Նշեմ որ քաղաքացիների բարձրացրած առաջարկները վերաբերել են առողջապահական, կրթական և սոցիալական ոլորտներին, մասնավորապես՝ նոր դեղորայքի ներդրման, բուժկանխարգելիչ միջոցառումների կազմակերպման, բժշկական կրթության համակարգում բարեփոխումների իրականացման խնդիրներին:

Ներկայումս իմ կողմից մանրամասնորեն ուսումնասիրվում են վերոհիշյալ ոլորտների օրենսդրական դաշտերը, առկա խնդիրների հնարավոր պատճառները վերհանելու և լուծման ուղիներ որոնելու նպատակով:

Ներկայացրել եմ երեք առաջարկ «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ: Այն է՝

1. ՀՀ 2018թվականի պետական բյուջեի նախագծում 7-րդ բաժնի 02 խմբի 03 դասի «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի համար նախատեսված 307 227,4 դրամին ավելացնել ևս 150 մլն. դրամ, որից 70մլն. դրամը նախատեսել «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ» ծրագրին՝ 6 և 12 տարեկան համապատասխանաբար 42701 և 36156 երեխաների բերանի խոռոչի պարտադիր սանացիայի նպատակով:

2. ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծում 7-րդ բաժնի 03 խմբի 03 դասի <<Երեխաների բժշկական օգնության ծառայություններ>> ծրագրի համար նախատեսված 7.790 717,0 դրամին ավելացնել 1 մլրդ դրամ՝ 8-14 (ներառյալ) տարեկան երեխաներին անվճար բժշկական օգնություն տրամադրելու նպատակով:
3. ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծում 7-րդ բաժնի 02 խմբի 01 դասի <<Ամբուլատոր-պոլիկլինիկական օգնության ծառայություններ>> ծրագրի համար նախատեսված 18 441 949,4 դրամին ավելացնել ևս 1 մլրդ դրամ՝ բնակչության համար ծառայությունն ավելի մատչելի և հասցեական դարձնելու նպատակով:

**Հարգանքով՝ Մարինա Մարգարյան**